

Հաստատում եմ
Դպրոցի տնօրեն

31.08.2023
Լ.Սարաջյան



ԴԱՍՂԵԿԻ
ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ
ՏԱՐԵԿԱՆ ԾՐԱԳԻՐ
ԱԲՈՎՅԱՆԻ Հ.4 ԱՎԱԳ ԴՊՐՈՑ
10 ՀՈՒՄԱՆԻՏԱՐ 3 ԴԱՍԱՐԱՆԻ
ԴԱՍՂԵԿ Մուսայեյան Ն. Ս.

2023-2024ՈՒՍ. ՏԱՐԻ

ԴԱՍՂԵԿԻ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Դասարանիղեկավարը (այսուհետ՝ դասղեկ), իսկ տարրական դպրոցում՝ դասավարը՝

1)

դաստիարակչական աշխատանք է կատարում իր դասարանի սովորողների շրջանում, հայտնաբերում է կյանքի դժվարին իրավիճակում հայտնված սովորողի (ընտանիքի) և դրամասին մեկօրյա ժամկետում տեղեկացնում է դպրոցի տնօրենին՝ սերտորեն համագործակցելով մյուս մանկավարժական աշխատողների հետ.

2)

մասնակցում է իր ողեկավարած դասարանում սովորողների կրթության առանձնահատուկ պայմանների կարիքի դիտարկմանը, բացահայտմանը, գնահատմանը և մանկավարժահոգեբանական աջակցության համապատասխան ծառայություններ իմ շակմանը, դրանց ապահովմանը.

3)

նպաստում է սովորողներին կատամար դպրոցի և ընտանիքի միասնական մանկավարժական պահանջների կատարման ապահովմանը.

4)

անհրաժեշտության դեպքում սովորողների համար կազմակերպում է ուսումնական օգնություն.

5)

իրականացնում է դասարանի համար սահմանված գործավարությունը, էլեկտրոնային գրանցումները, դպրոցի տնօրինությանը ներկայացնում սովորողների առաջադիմության, հաճախումներին վարքի մասին տեղեկատվություն.

6)

կազմակերպում է սովորողների առողջության ամրապնդմանն ու ֆիզիկական զարգացմանը նպաստող միջոցառումներ, մրցույթներ, նպատակային էքսկուրսիաներ, շրջագայություններ և այլ միջոցառումներ.

7)

դպրոցի մանկավարժական խորհրդի քննարկմանն են ներկայացնում սովորողին խրախուսանքի կամ կարգապահական տույժի ներկայացնելու հարցը:

(ՀՀ կառավարության 2002 թ. Հունիսի 25-ի N 1392-Ն որոշում,
«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ»
ՊԵՏԱԿԱՆ ՉԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՕՐԻՆԱԿԵԼԻ
ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ, կետ 74)

Սովորողի իրավունքներն ու պարտականությունները

111. Դպրոցում սովորողներն ունեն հավասար իրավունքներ և պարտականություններ:

112. Սովորողն իրավունք ունի՝

1) ստանալու հանրակրթության պետական կրթական չափորոշիչն համապատասխան կրթություն.

2) ծնողի համաձայնությամբ՝ ընտրելու ուսումնական հաստատությունը և ուսուցման ձևը, ինչպես նաև դպրոցում առկա հոսքը, ստանալու վճարովի կրթական ծառայություններ.

3) անվճար օգտվելու դպրոցի ուսումնականության բազայից.

4) ստանալու կրթության առանձնահատուկ պայմանների կարիքի բավարարմանն ուղղված աջակցություն.

5) մասնակցելու ներդպրոցական և արտադպրոցական միջոցառումների.

6) պաշտպանված լինելու ցանկացած ֆիզիկական և հոգեբանական ճնշումներից, շահագործումից, մանկավարժական և այլ աշխատողների ու սովորողների այնպիսի գործողություններից կամ անգործությունից, որով խախտվում են սովորողի իրավունքները կամ ոտնձգություն է կատարվում նրա պատվի ու արժանապատվության նկատմամբ.

7) դպրոցի կանոնադրությամբ սահմանված կարգով մասնակցելու ուսումնական հաստատության կառավարմանը.

8) ազատորեն փնտրելու և մատչելի կերպով ստանալու ցանկացած տեղեկատվություն՝ բացառությամբ օրենքով սահմանված դեպքերի.

9) ազատ արտահայտելու սեփական կարծիքն ու համոզմունքները.

10) խրախուսվելու օրինակելի վարքի կամ բարձր առաջադիմության համար.

11) օգտվելու օրենքով և դպրոցի ներքին կարգապահական կանոններով սահմանված այլ իրավունքներից:

113. Սովորողը պարտավոր է՝

1) կատարել դպրոցի կանոնադրության և ներքին կարգապահական կանոններով սահմանված պահանջները.

2) ստանալ հանրակրթության պետական չափորոշիչներին համապատասխան գիտելիքներ, ձեռք բերել և տիրապետել համապատասխան հմտությունների ու կարողությունների, բավարարել սահմանված արժեքային համակարգին ներկայացվող պահանջները.

3) հաճախել և մասնակցել ուսումնական պարապմունքներին.

4) կատարել օրենքով ու դպրոցի ներքին կարգապահական կանոններով սահմանված և Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը չհակասող այլ պարտականություններ:

114. Հանրակրթական դպրոցն ապահովում է կրթական ծրագրի կատարման անվտանգ և ապահով պայմաններ, բնականոն աշխատանքային ռեժիմ, բժշկական օգնություն և

սպասարկում, ինչպես նաև սովորողների ֆիզիկական զարգացման ու առողջության ամրապնդման համար անհրաժեշտ պայմաններ, ձևավորում է անձնական հիգիենայի և առողջ ապրելակերպի հմտություններ՝ համաձայն առողջապահության բնագավառում պետական կառավարման լիազորված մարմնի սահմանած կարգի:

115. Յուրաքանչյուր սովորող տարեկան առնվազն մեկ անգամ անցնում է բժշկական (կանխարգելիչ) հետազոտություն, որն իրականացվում է դպրոցի բժշկական սպասարկման ծառայության կողմից, իսկ դրա անհնարինության դեպքում՝ տարածքային սպասարկման առողջապահական կազմակերպության կողմից՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի միջոցների հաշվին:

116. Դպրոցում կարգապահությունն ապահովվում է օրենքով, կանոնադրությամբ և ներքին կարգապահական կանոններով սահմանված կարգով:

117. Դպրոցի ներքին կարգապահական կանոնները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում օրենքով ու կանոնադրությամբ սահմանված կարգով միջին և ավագ դպրոցների սովորողների նկատմամբ կարող են կիրառվել հետևյալ կարգապահական սույժերը

1) նկատողություն:

2) խիստ նկատողություն:

118. Սովորողի նկատմամբ կարգապահական տույժ նշանակելու օրվանից հետո մեկ տարվա ընթացքում կարգապահական տույժը կարող է հանվել, եթե սովորողը նոր կարգապահական խախտում թույլ չի տվել և իրեն դրսևորել է որպես բարեխիղճ, օրինակելի, կարգապահ սովորող:

119. Սույն օրինակելի կանոնադրության 117-րդ կետի 2-րդ ենթակետով նախատեսված կարգապահական տույժը մեկ ուսումնական տարվա ընթացքում նույն սովորողի նկատմամբ կրկնակի կիրառվելու դեպքում դպրոցը կարող է դիմել սոցիալական աջակցության բնագավառի լիազոր մարմին՝ երեխայի համար սոցիալական աջակցության ծառայություն կազմակերպելու վերաբերյալ առաջարկությամբ:

120. Սովորողների համար հիմնադրի, նախարարության, տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների, դպրոցի, ինչպես նաև սոցիալական գործընկերների, կազմակերպությունների, անհատների կողմից կարող են սահմանվել բարոյական և նյութական խրախուսման ձևեր՝ շնորհակալագիր, գովասանագիր, դրամական խրախուսում կամ կանոնադրությամբ սահմանված այլ ձևեր:

107. Դպրոցի սովորողների ինքնավարության և ինքնակառավարման լիազորություններով օժտված ներկայացուցչական մարմինն աշակերտական խորհուրդն է, որն ստեղծվում է ժողովրդավարության և ինքնավարության սկզբունքներին համապատասխան՝ դպրոցի գործունեության կազմակերպմանը նպաստելու, անմիջականորեն իրենց վերաբերող հարցերի մասին սովորողների կարծիքի ազատ արտահայտումն ապահովելու, դրանք դպրոցի կառավարման և խորհրդակցական մարմիններ ներկայացնելու, սովորողների իրավունքների ու պարտականությունների վերաբերյալ դպրոցի կանոնադրության դրույթների պահպանումը վերահսկելու նպատակով և ղեկավարվում է նախարարության կողմից հաստատված աշակերտական խորհրդի օրինակելի կանոնադրությամբ:

108. Աշակերտները կարող են նաև ըստ հետաքրքրությունների ստեղծել ակումբներ, միավորումներ, որոնք աշակերտական ինքնավարության զարգացմանը նպաստող օղակներ են:

Ծնողական խորհուրդ

96. Դասարանների ծնողական խորհուրդները (կազմված՝ նախագահից և երկուսից չորս անդամից) ընտրվում են դասարանի ծնողների ընդհանուր ժողովի կողմից՝ մեկ ուսումնական տարվա համար:

97.

Դպրոցի ծնողական խորհուրդը կազմավորվում է դասարանների ծնողական խորհուրդների նախագահներից: Ծնողական խորհրդի նախագահը ընտրվում է փակ քվեարկությամբ, ծնողական խորհրդի անդամների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ: Ծնողական խորհրդի նախագահը մանկավարժական խորհրդի անդամ է:

98. Դպրոցի ծնողական խորհրդի նախագահը խորհրդին իստիցառնվազներ է քօր առաջ խորհրդի անդամներին պատշաճ կերպով տեղեկացնում է նիստի անցկացման տեղի, ժամի և օրակարգի մասին: Ծնողական խորհրդի որոշմամբ՝ նիստի օրակարգում կարող են կատարվել փոփոխություններ:

99. Դասարանական նյութաբանական ծնողական խորհուրդներին իստերն իրավագորեն, եթե դրանց մասնակցում է ծնողական խորհուրդների անդամների ընդհանուր թվի կեսից ավելին: Որոշումներն ընդունվում են քվեարկությանը մասնակցած անդամների ձայների մեծամասնությամբ: Ծնողական խորհուրդների յուրաքանչյուր անդամ ունի մեկ ձայնի իրավունք: Ձայնի փոխանցումն արգելվում է:

100. Դասարանական ծնողական խորհուրդներին իստերն մասնակցում են դասղեկները, իսկ դպրոցական ծնողական խորհրդի նիստերին՝ տնօրենը:

101.101.

Համադպրոցական հարցերի քննարկման համար ծնողական խորհուրդը իրավիք ունի ընդհանուր ժողովներ: Ուսումնական տարվա ընթացքում, համաձայն դպրոցի ուսումնադաստիարակչական տարեկան պլանի, հրավիրվում են դասարանական ժողովներ՝ առնվազն չորս անգամ, համադպրոցական ժողովներ՝ առնվազն երկու անգամ: Տնօրենի, ծնողական խորհուրդների և դասղեկների նախաձեռնությամբ՝ կարող են հրավիրվել արտահերթ համադպրոցական և դասարանական ծնողական ժողովներ:

102. Դպրոցի ծնողական խորհուրդը՝

1) դպրոցի խորհրդի ձևավորման կարգի պահանջներին համապատասխան՝ իր կազմից առաջադրում է խորհրդի անդամության թեկնածուների: Գրանցված թեկնածուներից ընտրված են համարվում փակ քվեարկությամբ առավել ձայներ հավաքած երկու թեկնածուն:

2) դպրոցի տնօրենի կամ մանկավարժական խորհրդի քննարկմանը ներկայացնում է սովորողների ուսումնադաստիարակչական աշխատանքի բարելավման, մանկավարժների խրախուսման, իրենց պարտականությունների կատարման գործում թերացող մանկավարժներին պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ առաջարկություններ:

3) աջակցում է դպրոցին՝ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողների մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունների կազմակերպման գործում:

4) ներկայացնում է ծնողներին անհրաժեշտ մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունները, մասնակցում դրանց մշակման և տրամադրման միջոցառումներին:

5) լսում է տնօրենի հաղորդումը դպրոցի գործունեության վիճակի ու հեռանկարային ծրագրերի մասին, ստանում ծնողներին հետաքրքրող հարցերի պարզաբանումները:

6) ամրապնդում է դպրոցի և ծնողների միջև կապերը, մանկավարժական աշխատողների և ծնողների կողմից երեխաների դաստիարակության նկատմամբ ձևավորում է միասնական պահանջներ:

7) ծնողներին ներգրավում է սովորողների արտադպրոցական և արտադասարանական աշխատանքներում:

8) օգնում է դպրոցին՝ սովորողների հիմնական պարտադիր կրթությունն իրականացնելու գործընթացում:

9) մասնակցում է սովորողների ուսուցման ու դաստիարակության համար անհրաժեշտ պայմանների ստեղծմանը, աջակցում է դպրոցի ուսումնանյութական բազայի հարստացմանը՝ այդ գործում ներգրավելով հովանավորների:

10) մասնակցում է ծնողագուրկ և սոցիալապես անապահով երեխաներին նյութական օգնություն ցույց տալու աշխատանքներին:

11) աջակցում է արձակուրդների ժամանակ սովորողների հանգստի և ժամանցի կազմակերպմանը:

12) ապահովում է երեխայի իրավունքների պաշտպանությունը դպրոցում:

13) ծնողներին ապահովում է տեղեկատվությամբ, կազմակերպում սեմինարներ, խորհրդատվություններ:

14) ծնողներին ծանոթացնում է իրենց իրավունքներին, պարտականություններին և օրենքով սահմանված պատասխանատվությանը:

103. Դպրոցի ծնողական խորհուրդը համագործակցում է դպրոցի մանկավարժական և այլ խորհուրդների հետ:

104. Դպրոցի ծնողական խորհուրդը կարող է տնօրենի նկատմամբ անվստահության վերաբերյալ առաջարկ ներկայացնել դպրոցի խորհրդին:

105. Ծնողական խորհրդի քարտուղարը կազմում է նիստերի արձանագրությունները: Համադպրոցական և դասարանական ծնողական ժողովների նիստերի արձանագրությունները և նդունված որոշումները երեք աշխատանքային օրվա ընթացքում հրապարակվում են դպրոցի կայքէջում:

106. Կանոնադրությամբ սահմանված նպատակների իրագործման համար դպրոցի ծնողական խորհուրդը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով կարող է իրականացնել այլ լիազորություններ:

(ՀՀ կառավարության 2002 թ. Հուլիսի 25-ի N 1392-Ն որոշում,
«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ
ՀԱՍՏՏՈՒԹՅՈՒՆ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐՈՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ Օ Ր Ի Ն Ա Կ Ե Լ Ի
ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ)

ԿՐԹԱԴԱՍՏԻԱՐԱԿԶԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1.ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ (ԴԱՍԱՐԱՆԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ)

Դասարանում կա 24 աշակերտ՝ 7 տղա, 17 աղջիկ: Ընդհանուր առմամբ հանգիստ են, կարգապահ: Դասերին ուշադիր են, չեն ուշանում, բացակայելու դեպքում զգուշացնում են կամ ծնողը զանգահարում է: Կազմակերպվել է հերթապահություն, որը կատարում են պարտաճանաչորեն:

2.ՈՒՍՈՒՄՆԱԴԱՍՏԻԱՐԱԿԶԱԿԱՆ ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ՈՒՍ ՏԱՐՎԱ ԸՆԹԱՑՔՈՒՄ

1. Դասարանական ամենշաբաթյա ժողովներ, որոնց ընթացքում կքննարկվեն ուսումնական առաջադիմության և կարգապահության հարցեր:

2. Ծնողական ժողովներ, որոնց ընթացքում կքննարկվեն աշակերտի ուսման առաջադիմությանը և վարքը:

Ուսումնական տարվա ընթացքում նախատեսվող ուսումնադաստիարակչական աշխատանքները բազմազան են: Այդ աշխատանքի կազմակերպման ժամանակ պետք է ապահովել սովորողների անվտանգությունը, սանիտարահիգիենիկ պահանջների պահպանումը, դպրոցական և ազատ ժամերի ռեժիմի պահպանման նպատակով ուսուցողական աշխատանքի կազմակերպումը, աշակերտների ձեռքբերումների, հաջողությունների և բացթողումների ուսումնասիրությունը:

--

3. ՀԱՅԵՑԻ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

3.1. ՀՈԳԵՎՈՐ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ
Հոգևոր դաստիարակության կարևոր հատկանիշներից է գիտելիքը,ինչպես նաև իմաստությունը,մեծ խելքի ասկայությունը,հեռատեսությունը և կյանքի փորձը:
3.2. ԳԵՂԱԳԻՏԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ
Ստեղծագործական անձնավորության ձևավորման գործընթացն է :Շատ կարևոր է ընկալել և զգալ գեղեցիկը,գեղագիտական դաստիարակությունը կազմակերպում է անձի էմոցիոնալ ոլորտի հարստացումը:
3.3.ՌԱԶՄԱՀԱՅՐԵՆԱՍԻՐԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ
Հայրենասիրության ձևավորում,սեր հայրենիքի նկատմամբ,հարգալից վերաբերմունք մայրենի լեզվի նկատմամբ,քաղաքացիական զգացումների դրսևորում,հպարտություն իր հայրենիքի,իր պետական խորհրդանիշների,իր ժողովրդի համար:
3.4. ՖԻԶԻԿԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ
Առողջության ասելով հասկանում ենք ոչ միայն աշխատանքային հմտությունների ու կարողությունների ձևավորում,այլ նաև լիարժեք ֆիզիկական,հոգեկան,սոցիալական բարեկեցության վիճակ:В здоровом теле-здоровый дух.

3.5. ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

Աշխատանքային գործունեության կազմակերպում, աշխատանքային հմտությունների ու կարողությունների ձևավորում, աշխատանքի նկատմամբ բարեխիղճ վերաբերմունքի դաստիարակում:

3.6. ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

Մարդը+բնությունը=միասնություն:
Միակ ճիշտ և հավերժ պատասախանով հավաստում է, որի ճշգրիտ լուծումը կօգնի էկոլոգիական դաստիարակությունը:

3.7. ԴՊՐՈՑ-ԸՆՏԱՆԻՔ ԿԱՊԸ

Երեխայի կյանքը կազմված է երկու ոլորտներից՝ դպրոցից և ընտանիքից: Դպրոց-ընտանիք կապը ձևավորվում է համատեղ գործունեության ընթացքում, որի արդյունքում երկու կողմերն էլ պետք է զարգացում ապրեն:

--

ՈՒՍՈՒՄՆԱԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ուսումնական Շաբաթներ	Ուսումնադաստիարակչական աշխատանքների բովանդակությունը	Կատարման ժամկետը	Կատարողներ
1.	Կազմակերպչական հարցերի լուծում		դասղեկ
2.	Անկախության օր		դասղեկ
3.	Քաղաքական տեղեկություն		աշակերտներ
4.	Ընտանիքը՝ դա երջանկություն է		դասղեկ
5.	Օրվա ռեժիմը և նշանակությունը		դասղեկ
6.	Ինչպես պատրաստել տնային աշխատանքը		դասղեկ
7.	Տարվա եղանակները: Աշուն		դասղեկ
8.	Իմ սիրած հաղորդումը		դասղեկ
9.	Սպորտը՝ դա առողջություն է		Ֆ. ուսուցիչ
10.	Հայոց եկեղեցու պատմությունը		դասղեկ

11.	7.12.-հայ ժողովրդի հիշատակի օր		դասդեկ
12.	Իմ ընկերները:Հարաբերությունը ընկերության հետ		
Ուսումնական Շաբաթներ	Ուսումնադաստիարակչականաշխատանքներիբովանդակությունը	Կատարման ժամկետը	Կատարողներ
13.	Նոր տարվա տոներ:Ամանորյա ավանդույթները:		դասդեկ
14.	Իմ ազատ ժամանակը:Եվ իմ սիրելի զբաղմունքը:		դասդեկ
15.	Հայոց բանակ:		դասդեկ
16.	Արցախի պատերազմի հերոսները:		դասդեկ
17.	Կրոնական տոներ:Տրնդեզ և Սուրբ Վալենտինի օրը:		դասդեկ
18.	Երաժշտության և գեղարվեստի աշխարհը:		դասդեկ
19.	Մեր չեմպիոնները:Զրույց սպորտի մասին:		դասդեկ
20.	Շախմատի թիմային մրցույթները		Ֆ.ուսուցիչ
21.	Մարդու մեջ ամեն ինչ պետք է լինի հիանալի:		դասդեկ

22.	Էքսկուրսիա դեպի Երևան:		դասադեկ
23.	Երկխոսություն բնության հետ:		դասադեկ
24.	Հայաստան՝ իմ սեր:		դասադեկ
25.	Ապրիլի 7: Մայրության և գեղեցկության տոն:		դասադեկ
Ուսումնական շաբաթներ	Ուսումնադաստիարակչական աշխատանքների բովանդակությունը	Կատարման ժամկետը	Կատարողներ
26.	Կարդացված գրքերի քննարկում:		դասադեկ
27.	Երևանի պատմության թանգարանի այցելում:		դասադեկ
28.	Գիտության և տեխնիկայի աշխարհ:		դասադեկ
29.	Ապրիլի 24:		դասադեկ
30.	Թատրոնի և կինոյի այցելում:		դասադեկ
31.	Մայիսի 9: Հաղթանակի օրը:		դասադեկ
32.	Աշակերտների իրավունքները և պարտականությունները:		դասադեկ
33.	Արդյունքների ամփոփում:		դասադեկ
34.	Էքսկուրսիայի կազմակերպում դեպի բնության գիրկ:		Ծնողական խորհուրդ

ԴԱՍԱԳՐՔԵՐԻ ԲԱՇԽՈՒՄ

Անվանումը	Քիմիա			ՆԶՊ			Բնֆորմատիկա			Ֆիզիկա			Հասարակ.			Русский язык			Երկրաչափ ու թյուն			ՀԵՊ			
	ստացվել է	վարձավճ.	հանձնեց	ստացվել է	վարձավճ.	հանձնեց	ստացվել է	վարձավճ.	հանձնեց	ստացվել է	վարձավճ.	հանձնեց	ստացվել է	վարձավճ.	հանձնեց	ստացվել է	վարձավճ.	հանձնեց	ստացվել է	վարձավճ.	հանձնեց	ստացվել է	վարձավճ.	հանձնեց	
1		550			330			320			490			400			550			430			350		
2																									
3																									
4																									
5																									
6																									
7																									
8																									
9																									
10																									
11																									
12																									
13																									
14																									
15																									
16																									
17																									
18																									
19																									
20																									
21																									
22																									
23																									
24																									

Աշակերտների թիվը	24
16 դասագրքի գինը յուր. աշակերտի համար	7230 դրամ

ԴԱՍԱՐԱՆԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՄԱԴՊՐՈՑԱԿԱՆ, ՏԱՐԱԾՔԱՅԻՆ,
ՄԱՐԶԱՅԻՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻՆ

ԱՆՑԿԱՑՄԱՆ ԺԱՄԿԵՏԸ	ՄԻՋՈՑԱՌՄԱՆ ԱՆՎԱՆՈՒՄԸ	ԱՆՑԿԱՑՄԱՆ ՏԵՂԸ
01.09.2023	Գիտելիքի օր	N4 ավագ դպրոց
27.09.2023	44-օրյա զոհերի հիշատակին	Դպրոցի նախասրահ
05.10.2023	Ուսուցչի օր	Դպրոցի նախասրահ

ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՆԱԽԱՍԻՐԱԿԱՆ, ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ,
ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԵՎ ԱՅԼ ԽՄԲԱԿՆԵՐԻՆ

	Նախասիրական- առարկայական խմբակ	Գեղարվեստական, երաժշտական խմբակ	Մարզական խմբակ	Այլ խմբակ
1				
2				
3				
4				
5				
6				
7				
8				
9				
10				
11				
12				
13				
14				
15				

16				
17				
18				
19				
20				
21				
22				
23				
24				
25				
26				
27				
28				
29				
30				
31				
32				
33				
34				

ԴԱՍՂԵԿԻ ԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԹԵՄԱՏԻԿԱՆ

Անցկացման օրը	Դասղեկի անցկացման միջոցառման (դասախոսություն, գրույցներ, դիտողական արշավներ, էքսկուրսիաներնայլն) բովանդակությունը	Ծանոթություն
08/IX	Ծանոթության և կազմակերպչական հարցեր	
15/IX	Աշակերտական խորհրդի ընտրություն	
22/IX	Նոր կյանք՝ նոր վիրուսի պայմաններում	
29/IX	<<Իմ իրավունքներն ու պարտականությունները>>	
06/X	Ավագ դպրոցի դերը կրթական համակարգում	
13/X	Տնտեսագետի մասնագիտությունը	
20/X	<<Իմ մասնագիտության ապագան ՀՀ-ում>>	

03/XI	<<Արտագաղթ և հայրենիքի դերը իմ կյանքում>>	
10/XI	Ընկերություն և բարեկամություն	
17/XI	<<Ինչն է առաջնային իմ կյանքում>>	
24/XI	<<Կիրթ մարդն իմ պատկերացմամբ>>	
1/XII	<<Ճիշտ>> և <<Սխալ>>	
8/XII	Ինչպե՞ս կատարել ճիշտ ընտրություն	
15/XII	Արդարություն թե՞ հավասարություն	
22/XII	<<Փոքրիկ իշխան>> գրքի քննարկում և պատ.	
10/I	Նոր տարին	
17/I	<<Իմ դերն ընտանիքում>>	
24/I	<<Արդյո՞ք ծնողները միշտ իրավացի են>>	
31/I	Մերը՝ որպես ընտանիքի հենարան	
7/II	Վերաբերմունքը տարեցների նկատմամբ	
14/II	Գլոբալացում և մարդկության ապագան	
21/II	Բնական աղետներ,ինչպես պաշտպանվել	
28/II	<<Առողջ մարմնում առողջ հոգի>>	
6/III	<<Ես այն եմ, ինչ մտածում եմ>>	
13/III	Արվեստ և գիտություն	
20/III	Հայկական ավանդույթներն ու դրանց կարևորությունը	
3/IV	Հայ ազգի պատմական սխալները	
10/IV	<<Հիշում եմ և պահանջում>>	
17/IV	<<Մայրիկ>> ֆիլմի և գրքի քննարկումը	

ԴԱՍԱՐԱՆԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ ՈՒՍՏԱՐՎԱ ԱՎԱՐՏԻՆ

